6. Չարխոսանմաններ. Նրանց բաղմազանությունը և տարածումը: Սովորական ձարխոտ, նրա կաղմությունն ու բաղմացումը: Չարխոտանմանների ալելի բարձր կաղմակերպված լինելը մամուռների համեմատությամբ: Հնադարյան ձարխոտանմանների նշանակությունը քարածուխ դառնալու դործում: Քարածխի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ: Հասկացողություն ձարխոտանմանների ծագման մասին:

7. Մերկասերմեր. Սովորական սոճին վորպես մերկասերմերի ներկայացուցիչ: Սոճու կաղմության առանձնահատկությունը:

Արական և իդական բաղմացման սրգանների կաղմությունը: Փոշոտումը, բեղմնավորումը և սերմերի զարգացումը: Սյլ մերկասերմ բույսեր: Մի քանի մերկասերմերի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ:

8. Ծածկասերմեր. Ժամանակակից ծածկասերմերը վորպես բույսերի իշխող խումբ: Հասկացողություն բույսերի տեսակների, ցեղերի և ընտանիքների ստորարածանման մասին: Հասկացողություն ծածկասերմերի մի քանի կարևոր ընտանիքների մասին—գորտնածաղիկներ, խաչածաղիկներ, թիթեոնածաղիկներ, բարդազույններ և բանջարեղեններ: Նրանց նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ:

Ծածկասերմերը (վարսանդավոր) վորպես բարձր խմբի բույսեր: Հասկացողություն նրանց ծագման մասին:

Յեզրալիակում. Բուսական աշխարհի զարգացումը: Բուսական աշխարհի անփոփոխության մասին յեղած կրոնական պատկերացումների հակադիտականությունն ու վնասակարությունը:

1. Գրոֆ. ՍԱՔՄԻՄՈՎ.— Բուլյոսերի ֆիզիոլոգիայի համառոտ դասընթաց, 5-րդ հրատ. 1936 թ.
 2. Գրոֆ. Լ. Ա. ԻՎԱՆՈՎ.— Բուլյոսերի ֆիզիոլոգիա, 1936 թ. հրատ.
 3. Գրոֆ. ԻՎԱՆՈՎ.— Բուլյոսերի սիստեմատիկա:
 4. Գրոֆ. ԿՈՒՐՍՍԱՆՈՎ և Գրոֆ. ԴՈՒՆԿԻՆ.— Բուլյոսերանո, թյունո Դասագիրք մանկավարժական ԲՈՒՀ-երի համար, 1936 թ. հրատ.
 5. ՄԱԿ-ԴՈՒԳՈՂ.— Բուլյոսերի եկոլոգիա:
 6. Վ. Ա. ՏԻՄԻՐՅԱՋՈՎ.— Բուլյոսերի կյանքը:
 7. Կ. Ա. ՏԻՄԻՐՅԱՋՈՎ.— Նոդադործություն և բուլյոսերի ֆիզիոլոգիա.
 8. Վ. Լ. ԿՈՄԱՐՈՎ.— Բուլյոսերի ծագումը:
 9. Վ. Լ. ԿՈՄԱՐՈՎ.— Կուլտուրական բուլյոսերի ծագումը:
 10. Տ. Դ. ԼԻՍՆԵՆՈ.— Ցարովիզացիայի տեսական հիմունքները:
-

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (60 ԺԱՄ)

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (1 ԺԱՄ)

Կենդանաբանությունը գիտությունն է կենդանիների մասին, վորն ուսումնասիրում է նրանց բազմազանությունը՝ կապված նրանց ապրելակերպի հետ, նրանց ծաղման հետ և յերկրի վրա նրանց գոյության փոփոխվող պայմանների հետ:

Կոնկրետ ծանոթացում կենդանաբանական տեսակի հետ. մտա տեսակների միացումը ցեղերի, մտա ցեղերն—ընտանիքների, բնտանիքները կարգերի հետ (թռչունների, կաթնասունների, կրծողների, միջատների և այլ սթինակների վրա), զասերը և սիպերը վորպես կենդանաբանական կարգաբանության (կլասիֆիկացիա) բարձրակարգ միավորներ: Կենդանիների սիստեմատիկայի ուսումնասիրման հակաիրոնական նշանակությունը վորպես կենդանական ոչխարհի բնական պրոցեսի և պատմական զարգացման արտահայտություն:

ԿԵՆԴԱՆԻ ՈՐԳԱՆԻԶՄԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ (6 ԺԱՄ)

Կենդանու մարմնի ներքին և արտաքին կազմությունը (զարտի վրա փորձելով): Հասկացողություն կենդանու որդանների հիմնական սիստեմների և նրանց դերի մասին:

Սեռական զեղծեր և նրանց արտադրանքը—արական և իգական սեռական բջիջներ: Ամեն կենդանի ձվից է: Հասկացողություն բեղմնավորման մասին: արականի սեռական բջիջ (սպերմատոզոյիդի) միացումը իգականի բջիջ (ձվի) հետ: Բեղմնավորված ձվի կոտորակումը և սաղմի առաջանալը: Բջիջների շերտավորումը (զիֆերենցիայիան) սաղմի զարգացման ժամանակ և հյուսվածքների առաջանալը: Սաղմային շերտեր և հիմնական որդանների հիմնադրումը: վողմնաշարավորների սաղմերի մտա ներվային գլանիկների առաջանալը և վողմնազեղել ու գլխուզեղել

սագմի՝ ներվային փողակի զոյանալը: Կենդանիների բջջային կազմութունը վորպես ամբողջ կենդանական աշխարհի միասնականության արտահայտութիւնն. կենդանու բջջի առանձնահատկութիւնները: Միաբջիջ և բազմաբջիջ կենդանիներ:

ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (5 ԺԱՄ)

Նախակենդանիների՝ վորպես միաբջիջ կենդանիների ընդհանուր հատկանիշները՝ ամյորայի կամ պարամեցիա ինֆուզորիայի (հողաթափիկի) որինակի վրա: Նրանց կազմութունը (պրոտոպլազմա, կորիզ, պարունակութիւն) և կենսական գործողութիւնները (շարժում, սնվել, շնչառութիւն, արտաթորութիւն, զրգոսկանութիւն, բազմացում):

Կանաչ եզրկենսան վորպես մտրակավորների դասի ներկայացուցիչ. մտրակավորների մոտիկութիւնը միաբջիջ ջրմուռների հետ և կենդանական ու բուսական աշխարհի միջև խիստ սահմանի բացակայութիւնը, վորը վկայում է նրանց ընդհանուր ծագում ունենալու մասին:

Հասկացողութիւն պարազիտ նախակենդանիների մասին: Մալարիայի պարազիտը ու նրա զարգացումը մարդու և անոֆելես մոծակի մարմնի մէջ:

ԱՆԱՂԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (6 ԺԱՄ)

Քաղցրահամ ջրի հիդրան վորպես անալիսների ներկայացուցիչ: Հիդրայի կազմութիւնը, հյուսվածքների գիֆերենցիայի սկիզբը: Հիդրայի կենսակերպը. բազմացումը՝ անսեռ և սեռական: Կորցրած մասերի վերականգնման խիստ արտահայտված ընդունակութիւնը (ռեգեներացիան) կապված նրա մարմնի կազմութեան հարաբերական միակերպութեան հետ: Ծովային պոլիպներ և մեղուղաներ. մեղուղայի զարգացումը պոլիպից և նրա կազմութեան բարդացումը ինքնուրույն կյանքի անցնելուց հետո: Կորալյան պոլիպներ. կրային կմախքի նշանակութիւնը ալիքահար շրջանում ապրելու կապակցութեամբ: Կորալների դերը յերկրագնդի կեղևի զոյացման պրոցեսում:

Անաղիսները և սպունգները վորպես ստորին բազմաբջիջ կենդանիների յերկու հիմնական խմբեր: Գազութային մտրակավորները և բազմաբջջայնութեան ծագումը: Միաբջջային ստադիան բազմաբջիջ կենդանիների զարգացման պրոցեսում:

ՎՈՐԴԵՐԻ ՏԻՊԱՐ (4 ԺԱՄ)

Վորդերի ձևերի բազմազանությունը և նրանց բաժանումը առանձին յենթատիպարների: Տափակ վորդերի յենթատիպարը: Ծծողներ՝ նրանց առանձնահատկությունները՝ կապված պարագիտային կենսակերպի հետ: Յերիզորդ, եխինոկոկ, դրանց զարգացումը: Տերեր փոխելը և դրա կենսաբանական նշանակությունը: Վարդեր-պարադիտների դեմ պայքարելու կենսաբանական հիմունքները: Կլոր վորդերի յենթատիպարը: Ասկարիդներ, սստրիցա, արիխինա. կազմության զլխավոր առանձնահատկությունները՝ կապված պարագիտային կենսակերպի հետ: Վարակման միջոցները և վարակման դեմ կանխիչ միջոցների կենսաբանական հիմունքները:

Ողակավոր վորդերի յենթատիպար: Անձրեավորը վորպես այդ յենթատիպարի ներկայացուցիչ՝ նրա արտաքին ու ներքին կազմությունը՝ կապված նրա կենսակերպի հետ: Ողակավոր վորդերի ավելի բարդ կազմության հատկանիշները—մարմնի յերկրորդական խոռոչը, հյուսվածքների և դործարանների սխեմաների դիֆերենցիացիան:

Յերկշերտավոր սաղմի (գասարուկաներ) ստադիան վորդերի զարգացման պրոցեսում, վորպես հնադարյան ազեխորչներից ծագման վկայություն:

ՓԱՓԿԱՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՊԱՐ (2 ԺԱՄ)

Անատամը (կամ դեռային մարգարիտը) վորպես փափկամարմինների տիպարի ներկայացուցիչ, նրա կազմությունը՝ կապված նրա կենսակերպի հետ:

Թերթախոփկների դասի ընհանուր գծերն անատամի որինակի վրա. դրանց մի քանի ձևերի արդյունաբերական նշանակությունը:

Փորտանիների դաս: Յամաքային և ջրային խիունջներ. նրանց արտաքին կազմությունը և կենսակերպը: Խոռոչները և կողինջները վորպես դյուզատնտեսություն վնասատուներ:

Գլխոտանիների դասը (կարակատներ, կալմարներ, սեթոտանիներ) վորպես փափկամարմինների բարձրակարգ խումբ. դրանց արտաքին պատկերը, շարժվելու ձևը և կենսակերպը: Գլխոտանիների ծագման շրջանը յերկրի կյանքի անցած ժամանա-

կաշքջաններում (ամոնիտներ, բելմենիտներ) և դրանց, հետագա վոչնչացումը,

Փափկամարմինների նշանակութունը կրի շրջանառության և նստվածքային ապսոսների գոյացման մեջ:

Փափկամարմինների ջրային թրթուրների և ողակավոր վորդերի ջրային թրթուրների նմանությունը վորպես վկայություն նրանց ընդհանուր ծագման:

ՆՈՂՎԱԾՈՍԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԱՐ (16 ԺԱՍ)

Գետի խեցգետինը վորպես հողվածոտանինների տիպարի ներկայացուցիչ նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կազմված կենսակերպի հետ: Կազմության բարդացումը՝ համեմատած ողակավոր վորդերի հետ, խիտինային ծածկույթը և հողվածավոր վերջավորութունները վորպես հողվածոտանինների բնորոշ առանձնահատկություն: Մարմնի տարրեր հատվածների վերջավորությունների ձևափոխությունները՝ կապված դրանց տարրեր ֆունկցիաների հետ:

Հողվածոտանինների տիպարի բաժանումն առանձին դասերի: Խեցգետնակերպերի դասի ընդհանուր հատկանիշները: Ստորակարգ խեցգետնակերպեր (դաֆնիաներ և ցիկլոպներ) և դրանց նշանակութունը բնության ընդհանուր կյանքում և ձկնատընտեսության մեջ:

Սարգակերպերի դասի և բազմոտանինների դասի արտաքին կազմության ու կենսակերպի գլխավոր բնորոշ առանձնահատկությունները:

Միջատների դասը: Միջատների արտաքին և ներքին կազմությունը: Բազմացման և զարգացման առանձնահատկությունները: Լրիվ և թերի կերպարանափոխվող միջատներ: Հասկացողություն միջատների գլխավոր կարգերի մասին և նրանց համառոտ բնութագրումն ըստ իրենց թևերի և բերանի մասերի կազմության ու կերպարանափոխման յեղանակի:

Միջատների ձևերի բազմաքանակությունը և կյանքի տարրեր պայմաններին հարմարվելու բազմազանությունը: Պաշտպանողական գունավորումը միջատների մոտ (հովանավորող, նախազգուշացնող, միմիկրիա): Այդ հարմարանքների հարստերական նշանակությունը և նրանց մեջ նախակարգի նախապատահարմարության բացակայությունը: Այսպես կոչված

«հասարակական» միջատներ: Մեղու. նրա կենսաբանական առանձնահատկությունները և ոգտագործումը մարդու կողմից: Մեղվի ընտանիքի ծագման հարցը (մենակյայ մեղուներ, իշամեղուներ):

Միջատների նշանակությունը բնության կյանքում և մարդու տնտեսության մեջ: Միջատները և ծաղիկիները: Գյուղատնտեսության վնասատու միջատներ: Հիվանդություններ տարածող միջատներ: Միջատների քանակություն տատանումներն առաջացնող բնական պատճառները (վնասատուների մասսայաբար հայտնվելը և դրան հետևող անհայտացումը և այլն): Վնասատու միջատների կենսաբանության գիտական ուսումնասիրություն հակակրոնական և տնտեսական նշանակությունը:

Պարազիտ միջատների (հեծյալների և տախին-ճանճի) գործունեություն ոգտակարությունը մարդու համար: Վնասատու միջատների դեմ պայքարելու կենսաբանական հիմունքները:

Միջատների կապը ողակավոր վորդերի հետ: Միջատների թրթուրների վորդանման կազմությունը և նրանց պարզ արտահայտող ներքին սեղմենտացիան վորպես ապացույց, վոր նրանք ծագել են ողակավոր վորդերից՝ հնադարյան բազմատանիների միջոցով:

ՓՇԱՄՈՐԹՆԵՐԻ ՏԻՊԱՐ (1 ԺԱՄ)

Տովասողը վորպես փշամորթների ախպարի ներկայացուցիչ, նրա արտաքին տեսքը և կենսակերպը: Զրատար սիստեմը վորպես փշամորթների բնորոշ առանձնահատկություն: Հասկացողություն փշամորթների ախպար կազմող առանձին դասերի մասին: Փշամորթների զարգացումը յերկսիմետրիկ թրթուրներից: Փշամորթների հնադուլյն ձևերը (ծովախնձորներ, ծովաշուշաններ) և նրանց ճառագայթաձև սիմետրիան վորպես նստակյայ կյանքի հետ կապված հատկանիշ:

ԼԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԱՐ (4 ԺԱՄ)

Վողնաշարավորների համառատ նախնական բնութագիրը վորպես մի խմբակի, վորը միավորում է լարավոր (խորդավոր) կենդանիների ճնշող մեծամասնությունը: Վասկրավոր ձուկը վորպես ջրային սկզբնական վողնաշարավորների ներկայացուցիչ, նրա արտաքին և ներքին կազմությունը՝ կապված նրա

ջրային կենսակերպի հետ: Ներքին կմախքը (վոդնաշարը և դանդը) վորպես վողնաշարավորների բնորոշ առանձնահատկություն:

Գրծիկային կմախք ունեցող ձկները (թառափաղղիներ, շնաձկներ) վորպես վողնաշարավորի կազմակերպման ստորին ձևը: Խորդան կամ մեջքի լարը վորպես ստորակարգ ձկների ներքին կմախքի հիմք: Խորդայի աստիճանական արտադումը վողնաշարի կողմից բարձրակարգ ձկների մոտ նրանց զարգացման պրոցեսում:

Նշտարածուկը վորպես ձկների հին նախահայրերին մոտիկ ձև: Վողնաշարավորի և նշտարածկան՝ այս էանդնաշար վողնաշարավորի միջև յեղած նմանությունն ու տարբերությունը: Կենդանական աշխարհի նախկին բաժանումը վողնաշարավորների և անդնաշարավորների: Այդպիսի բաժանման անբավարար լինելը ժամանակակից գիտության ավյալների տեսակետից և լարավորների տիպարը սահմանելը:

Լարավորների (խորդավորների) տիպարի ընդհանուր բնութագիրը. 1) Լարի առկայությունը, 2) Սեջքի ներվային խողովակը, 3) խոիկային ճեղքերի առկայությունը: Լարավորների բաժանումը գանգաղուղիների և վողնաշարավորների յինթատիպարների: Վորդերի և նշտարածկան վաղսաղմնային ձևերի (յրկղնքա սաղմեր) նմանությունը վորպես ապացույց գրանց ընդհանուր ծագման հնազույն անաղիներից:

ՁԿՆԵՐԻ ԴԱՍ (3 ժԱՄ)

Ձկների դասի ընդհանուր բնութագիրը և նրա բաժանումը կարգերի: Ճեղքախոիկներ (կամ ընդլայնաբերաններ) և թառափաղղիներ. այդ կարգերի հարաբերական հնությունը և նրանց ներկայիս տարածումը: Վոսկրավոր ձկները վորպես ավելի նորագույն խումը, վորն իր ծաղկմանն և հասել յերկրի կյանքի արդի ժամանակաշրջանում:

Ձկների արտաքին տեսքի բազմադանությունը՝ կապված տարբեր կենսակերպի հետ և բնական ընտրության հետ (հատակում ապրող և բարձրալող ձկներ, «խաղաղ» և գիշատիչ ձկներ. ջրի խորքում ապրող ձկների առանձնահատկությունները):

Ձկների բազմացումը. ածած ձկերի քանակի և սերնդի պաշտպանության բնազդի միջև յեղած կապը: Արհեստաղործա-

կան ձկնորսութիւնը և նրա կապը ձկան կյանքի սեղոնային յերևույթների (ձկնորսութեան շրջան) հետ: Ծովային ձկնորսութիւնը և նրա զարգացումը ԽՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսութեան պայմաններում: Ձկնորսութիւն և լճային տնտեսութիւն:

ՅԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԻ ԴԱՍ (2 ԺԱՄ)

Գորտը վորպես յերկկենցաղների դասի ներկայացուցիչ, նրա արտաքին և ներքին կազմութիւնը, գորտի համեմատութիւնը ձկան հետ և նրա առանձնահատկութիւնները՝ կապված ջրից ցամաք դուրս գալու հետ: Զրամբարի առկայութիւնը վորպիս գորտի գոյութեան անհրաժեշտ պայման: Շերեփուկի՝ ձկնակերպ կենդանու ստադիան վորպես յերկկենցաղների պատմական զարգացման արտահայտութիւն: Պոչավոր և անպոչ յերկկենցաղներ, Հնադույն յերկկենցաղներ՝ ստեղծոցֆալներ և նրանց կապը հին վրձնալողակ ձկների հետ: Նրանց յերևան գալը նախապատրաստող պայմանները: Յերկկենցաղների ծաղկած վիճակը քարածխային դարաշրջանում («յերկկենցաղ» բուսականութեան զարգացման հետ միաժամանակ), յերկկենցաղների վոչ կատարյալ հարմարվածութիւնը ցամաքային կենսակերպին:

ՍՈՂՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (2 ԺԱՄ)

Սողեսը վորպես սողունների դասի ներկայացուցիչ, նրա արտաքին և ներքին կազմութիւնը՝ կապված նրա կենսակերպի հետ: Սողունների տարբերութիւնը յերկկենցաղներից և նրանց ամբիլ բարձր կազմակերպվածութեան նշանները: Սողունների բազմացման առանձնահատկութիւնները, վորոնք պայմանավորել են նրանց լրիվ ցամաքային կյանքի անցնելու հրնարավորութիւնը:

Սողունների բաժանումը կարգերի և նրանց համառոտ բնութագրին առանձին ներկայացուցիչների որինակի վրա (մողեսներ, ոձեր, կոկորդիլոսներ, կրիաներ):

Սողունների ծագումը ստեղծոցֆալներից: Ժամանակակից մողեսների գագաթային ուչքը վորպես հին ստեղծոցֆալներից և վրձնալողակ ձկներից ժառանգած առանձնահատկութիւն: Սողունների ծաղկած վիճակը և բազմազանութիւնը յերկրի կյանքի միջին դարաշրջանում և հետագայում նրանց վոչնչացումը:

ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (6 ԺԱՍ)

Թոշուհները արտաքին և ներքին կառուցվածքի առանձնահատկությունները՝ կապված նրանց կենսակերպի հետ (կոնկրետ որինակով):

Արտաքին նկարագիրը (փետրավորումը, կտուցը, վտանները, պարանոցի ճկունությունը՝ յերբ իրանը համարյա լքիվ կերպով անշարժ է):

Ներքին գործարանները: Թոշուհները կմախքի առանձնահատկությունները: Առջևի և հետին վերջավորությունների մասնագիտացումը. թևերի աշխատանքը թռիչքի ժամանակ, թոշուհների և սողունների կազմության ընդհանուր դժերը նրանց հարմարանքային հատկանիշների տարբերության պայմաններում:

Զու. նրա կազմությունը: Սաղմի զարգացումը ձվի մեջ: Խոհկային ճեղքերի ուղղմանները վորպես վկայություն, վոր ցամաքային վողնաշարավորները ծաղիլ են հին ջրային ձևերից. Թոշուհների և սողունների սաղմի նմանությունը, վորը ցույց է տալիս նրանց մոտիկ ազգակցությունը:

Վոշնչացած նախաթոշուհները վորպես կապող ողակ թրուհուհների և սողունների միջև: Իսկական թոշուհների ծաղկումը յերկրի կյանքի նոր զարաշրջանում: Նրանց կենսական առավելությունները հանդեպ նախորդ զարաշրջաններում ապրած թեվավոր մողեսների (տաքարյունություն, փետրավորում, թևերի ավելի կատարելագործված կառուցվածք): Թոշուհների դասի ձեվերի բողմագանությունը՝ կապված միջավայրի և կերի հայթայթման ձևերի հետ, վորպես բնության մեջ կատարված ավելի հարմարվողների ընտրության արդյունք:

Թոշուհների բազմացումը: Զվի դունավորման և ձևի կենսաբանական նշանակությունը: Թոշուհներ՝ վորոնց ձագերը ձվից դուրս գալուն պես ընդունակ են շարժվելու և ինքնուրույն կերակրվելու և թոշուհներ՝ վորոնց ձագերը լինում են անպաշտպան և խնամքի կարոտ: Թոշուհների չուն. նրա կենսաբանական նշանակությունը և ծագումը:

ԿԱՅՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (10 ԺԱՍ)

Կաթնասուն կենդանիների առանձնահատկությունները համեմատած վողնաշարավորների մյուս դասերի հետ (կոնկրետ որինակով): արտաքին և ներքին կազմությունը, բազմացումը

և զարգացումը: Կաթնասունների ու թռչունների «տաքաբյու-
թյունը» և ուղեղի ավելի բարձրաստիճան զարգացումը, վորոնց
պատճառով այդ կենդանիներն ավելի սպիտակա չափով են
կախված արտաքին պայմանների փոփոխականությունից, «դադ-
արյուն» վորնաշարավորների համեմատությամբ: Կաթնասուն-
ների ձևերի բազմազանությունը՝ կապված կենսակերպի և միջա-
վայրի հետ, վորոնք ստեղծվել են պատմական զարգացման հե-
տևանքով, կապված շրջապատող միջավայրի փոփոխվող պահանջ-
ների հետ:

Միանցքանիների կամ ձվածիկների յենթադասը (բադա-
կտուց, յեխիդնա) վորպես կաթնասուններին և սողուններին մի-
ացնող վորնչացող խմբակ:

Պարկավորների յենթադասը վորպես կաթնասունների դար-
գացման ավելի բարձր աստիճան (համեմատած միանցքանիների
հետ): Պարկավորների ժամանակակից տարածումը և նրանց ցե-
վերի բազմազանությունը Ավստրալիայում, այդ մայրացամաքի
վաղուց բաժանվելու անհնությամբ:

Բարձրակարգ կամ բնկերքավոր կաթնասունների յենթա-
դասը: Բարձրակարգ կաթնասունների արդ ծագումն ու մաս-
նագիտացումը՝ յերկրագնդի կյանքի նոր դարաշրջանում:

Միջատակերների կարգը վորպես մի խմբակ, վորը պահ-
պանել և իր ավելի մոտիկությունը հին բարձրակարգ կաթնա-
սունների ընդհանուր նախահայրերի հետ (ատամների թույլ դի-
ֆերենցումը, վորքը չափերը):

Ձեռքաթևայինների կարգը վորպես մասնագիտացած (թռչ-
լու ընդունակության կապակցությամբ), միջատակերներին մո-
տիկ խմբակ:

Կրծողների կարգը վորպես առավելապես բուսական կերա-
կրով սնվելուն հարմարված խմբակ: Կրծողների կենսաբանա-
կան առանձնահատկությունները, վորոնց շնորհիվ նրանք ներկա
զարաշրջանում հասել են ծագված վիճակի գյուղատնտեսու-
թյան վնասատու կրծողներ:

Գիշատիչների կարգը և այդ կարգի մեջ մտնող դիտավոր-
ընտանիքները: Թիափոտանիների և կետամանների կարգը վոր-
պես գիշատիչ կաթնասունների խիստ փոփոխված և մասնագիտաց-
ված ազգակից:

Սմբակավոր կաթնասունների ծագված վիճակը՝ կապված
բաց տափաստաններ առաջանալու հետ. անհետացած քիչ մաս-

նազիտացված նախամբրակավորները (ֆենակող) և ժամանակակից միասնաբակավորների ու յերկամբրակավորների կարգի զարգացումը: Կենսիթավորների կարգի առանձնահատկությունները և նրանց ծագումն ավելի մանր և ավելի քիչ մամնազիտացած ձևերից:

Պրիմիտիվների կարգը. նրանց առանձնահատկությունները և մտիկությունը միջատակերներին: Կապիկները վորպես մազլցող կենդանիներ: Մարզը վորպես պրիմիտիվների կարգի անդամ. մարդու կառուցվածքի այն դժերը, վորով նա տարբերվում է կենդանիներից:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (5 ԺԱՄ)

Կենդանական աշխարհի եվոլյուցիոն զարգացման դիւա-վոր մոմենտները և հիմնական ուղիները (ուսումնասիրված նյութի հիման վրա): Մարդու գործունեությունը վորպես ըստ ժամանակի նոր ֆակտոր կենդանական աշխարհի եվոլյուցիայի մեջ: Կենդանիների ընտելացումն ու ընտանեցումը (կապված գլխավոր տնային ցեղերի ծագման հարցի հետ). կենդանու հատկանիշների և տնտեսական վորակի փոփոխումը՝ շնորհիվ արհեստական ընարություն կիրառման: Մորթու դադանարուծությունը վորպես անասնարուծության նոր բնադավառ: Բնական ռեսուրսների պաշտպանության խնդիրներ և կենդանական աշխարհի վերակառուցումը սոցիալիստական տնտեսության պայմաններում:

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՍԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆԷՆԵՐ

Գորտի հերձումը:

Գորտի մաշկի և ուրիշ հյուսվածաբանական պրեպարատների նայումը միկրոսկոպի տակ:

Միկրոսկոպի տակ նայել ինֆուզորիաներ և ծովամոմեր (ժողովարկավոր):

Կենդանի հիդրայի դիտումը:

Անձրևավորդի հերձումը:

Անատամավորի հերձումը:

Գետի խեցդեմնի կամ խոշոր միջատի (սև տարականի) արտաքին զննումը և հերձումը:

Ձկան արտաքին զննումը և հերձումը:

Թռչունի արտաքին զննումը և հերձումը:

Կաթնասունների հերձումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՁԻ ՀԱՄԱՐ

ԲԵԼՅԱՅԵՎ Մ. Մ. ՅԵՎ ԿՐԵՄԵՆՆԵՑԿԻ Ն. Կ. — Կենդանաբանության մեթոդիկա. 1937 թ.:

ԿՐԵՄԵՆՆԵՑԿԻ Ն. Կ. — Միկրոսկոպ և աշխատանքը նրանով, 1937 թ.:

ԴՈԳԵՆՎ. Վ. Ա. — Անողնաշարավորների կենդանաբանության դասագիրք. 1937 թ.:

ԿԱՆԿԱՐՈՎ Գ. Ն. ՅԵՎ ՄՏԱՆՁԻՆՍԿԻ Վ. Վ. — Վողնաշարավոր կենդանիների կենդանաբանության կուրսը. 1935 թ.:

ՔԴՆԵՎ Ա. Ի. — Վողնաշարավորների կենդանաբանության դասագիրք. 1934 թ.:

ՈԳՆԵՎ Ա. Ի. — Կենդանաբանությունը Ձեռնարկ միջնակարգ դպրոցների դասատուներին համար. 1937 թ.:

ՄԱՏՎԵՅԵՎ Բ. Ս. — Կենդանաբանության կուրս. 1937 թ.:

ՍԵՐԵՔՐՈՎՍԿԻ Պ. Վ. — Որդանական աշխարհի պատմությունը. 1932 թ.:

ՄԵՎԵՐՏՈՎ Ա. Ն. Եվոլյուցիոն պրոցեսի դիտավոր ուղղությունը. 1934 թ.:

ԳՐԵԳՈՐԻ Վ. Կ. — Անձի եվոլյուցիան ձկնից մինչև մարդը. 1934 թ.:

ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱՆ ՅԵՎ ՖԻԶԻՈԼՈ- ԳԻԱՆ (50 ժԱՄ)

Ն Ե Ր Ա Շ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (1 ժամ)

Հասկացողություն մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի առարկայի մասին և այդ գիտությունների նշանակությունը գործնական կյանքում:

Մարդու մարմնի կազմության և գործունեությունն ուսումնասիրության ուղիները: Մարդու և կենդանիների մեջ և յեղած նմանությունն ու տարբերությունը:

Աշխատանքը վորպես անհրաժեշտ պայման մարդու գոյության համար:

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԲԶՋԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ (4 ժԱՄ)

Բջջի կազմությունը — պրոտոպլազմա, կորիզ, կորիզակ:

Բուսական և կենդանական բջիբի նմանությունը:

Բջիջների բազմաանալը՝ ուղղակի և անուղղակի բաժանում:

Կենդանիների և մարդկանց մարմնի մեջ յեղած բջիջների բազմազանությունը:

Հյուսվածքների տեսակները՝ էպիթելային, շարակցական, (վոսկրային, կրճկային, ճարպային, թելավոր), մկանային (հարթ և ընդլայնական — շերտավոր), ներվային:

2. ՎՈՍԿՐԱՄԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ (6 ժԱՄ)

Կմախքը վորպես մարմնի ամուր հենարան:

Վոսկրների տեսակները: Վոսկրի կառուցվածքը — վերնուսկր, խոացած և սպունդային նյութ, վոսկրածուծ:

Վոսկրի բազադրությունը — որդանական և անորդանական նյութեր:

Վոսկրի զարգացումը և աճումը:

Վոսկրների միացումը: Հոդերի կազմությունը:

Կմախքի կազմության ընդհանուր տեսությունը — զանգ,

վողնաշար, կրծքավանդակ, կոնքային և ուսային դոտիներ, վերջավորութիւններ:

Մարդու և վողնաշարավոր կենդանիների կմախքի կազմութեան նմանութիւններ:

Կմախքի կազմութեան առանձնահատկութիւնները՝ նրա մարմնի ուղղաձիգ դիրքի կապակցութեամբ:

Կմախքի նշանակութիւնը վորպես շարժողութեան պասսիվ ապարատ:

Մկաններն իրրև շարժման ակտիվ ապարատ:

Կծկվելը վորպես մկանների հիմնական հատկութիւն:

Մարդու մարմնի գլխավոր մկանները և նրանց աշխատանքը:

Մկանային աշխատանքի ժամանակ մկանի մեջ կատարվող

Ֆիզիկական և քիմիական փոփոխութիւնները:

Աշխատանքի և ֆիզիկական վարժութիւնների նշանակութիւնը վոսկրամկանային համակարգութեան զարգացման համար:

3. ՍՆՈՒՆԴ ՅԵՎ ՄԱՐՍՈՂՈՒԹՅՈՒՆ (4 ԺԱՄ)

Սնունդը և նրա նշանակութիւնը վորպես նյութի և եներգիտայի աղբյուր մարդու մարմնի համար: Սննդի բաղադրութիւնը, գլխավոր սննդանյութերը՝ սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, վիտամիններ: Սննդի վերամշակումը մարսողական գործարաններում և դրա նշանակութիւնը: Հասկացողութիւն ֆերմենտների մասին:

Մարսողութեան ապարատի կազմութեան ընդհանուր տեսութիւնը:

Սննդի մարսողութիւնը բերանի խոռոչում, կուլ տալը, մարսողութիւնը ստամոքսում և բարակ ու հաստ աղիքներում: Ներծծում: Լյարդի դերը:

4. ԱՐՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ (6 ԺԱՄ)

Արջան բաղադրութիւնը— արջան պլազմա, կաթիլ և սպիտակ արջան մարմնիկներ, արջան թիթեղներ: Արջան մակարդակը:

Արջան նշանակութիւնը մարդու որդանիզմի համար:

Հասկացողութիւն արջան պաշտպանողական հատկութեան և վարակի դեմ պայքարելու մասին: Հասկացողութիւն իմունիտետի մասին: Ավիչը և նրա բաղադրութիւնը:

Արյան շարժումը մարմնի մեջ: Արտանոթային սխեմաի կազմութիւնը, սրտի կազմութիւնը և նրա աշխատանքը:

Մարդու կատարած զանազան աշխատանքների ազդեցութեան տակ սրտի գործունեութեան մեջ առաջացող փոփոխութիւնները:

Արյան շարժումն արյունատար անոթներով զարկերակ (պուլս):

5. ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ (3 ԺԱՄ)

Մարդու շնչառութեան գործարանների կազմութիւնը: Շնչառութեան մկաններ, կոկորդ, շնչափող, շնչափողի ճյուղավորութիւնները թոքերում (բրոնխներ), թոքեր: Արտաշնչման և ներշնչման մեխանիզմը:

Գազերի փոխանակումը թոքերում:

Արյան դերը ածխաթթու գազի և թթվածնի փոխադրութեան մեջ՝ որգանիղմում: Գազափոխանակումը հյուսվածքների մեջ: Տարբեր աշխատանքի ազդեցութեան տակ շնչառութեան գործարանների գործունեութեան մեջ առաջացող փոփոխութիւնները:

Թունափոր նյութերի ներգործութիւնը շնչառութեան որգանների վրա:

6. ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈՒԱՆԱԿՈՒՄ ՅԵՎ ԵՆԵՐԳԻԱ (3 ԺԱՄ)

Հասկացողութիւն որգանիղմում կատարվող ասսիմիլիացիայի և դիսսիմիլիացիայի մասին: Այդ գործողութիւնների միասնութիւնը, փորը կազմում և նյութերի փոխանակման էյութիւնը: Նյութերի փոխանակութիւնը և վերածվելն եներգիայի իրքև որգանիղմի հիմնական կենսական ֆունկցիա:

Սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի փոխանակումը: Սննդանյութերի կալորիականութիւնը: Հանքային նյութերի և ջրի փոխանակութիւնը:

Վիտամիններ: Սննդառութեան՝ առողջապահութիւնը:

7. ԱՐՏԱԹՈՐՈՒԹՅՈՒՆ (2 ԺԱՄ)

Նյութափոխանակման վերջնական արտադրումները և դրանց արտաթորման անհրաժեշտութիւնը: Միդատար ապարատի կազմութիւնը: Յերիկամների աշխատանքը: Մեղի բաղադրութիւնը:

Միզաթամփուռտի դերը:

Մաշկը և թոքերը վորպես արտաթորութեան պորժարաններ: Բրտինքը և նրա բաղադրութունը: Զերմութեան արձակումը մաշկի մակերեսից՝ տարբեր պայմաններում: Մաշկի անողջապահութունը:

Թունազտը նյութերի աղդեցութունը մաշկի վրա:

8. ՆԵՐՔԻՆ ՍԵԿՐԵՑԻԱՅԻ ԳԵՂՁԵՐ (4 ժԱՄ)

Տարբեր բջիջների և հյուսվածքների քիմիական փոխաղդեցութունը որպանիզմում:

Ներքին սեկրեցիայի գեղձերը և նրանց առանձնահատկութունները: Հասկացողութուն հորմոնների մասին:

Ներքին սեկրեցիայի վահանաձև գեղձի, ուղեղային հազելվածի, մակյերիկամների, յենթաստամոքսային գեղձի և սեռական գեղձերի նշանակութունը:

9. ԲԱԶՄԱՑՈՒՄ ՅԵՎ ԱՃՈՒՄ (2 ժԱՄ)

Սեռական որդաններ: Սեռական գեղձեր և նրանց կողմից արտադրվող սեռական բջիջները: Զվաբջիջ և սպերմատոզոիդ:

Բեղմնավորումը և սաղմի զարգացումը: Տարբեր տեսակի սաղմերի կազմութեան և զարգացման նմանութունը և աստիճանաբար առաջադող տարբերութունները: Այդ փաստերի կարեւորութունը եվոլյուցիոն ուսմունքի համար: Աճող որդանիզմի առանձնահատկութունները. ասիմիլացիայի պորժողութունների գերակշռութունը. չափերի և կշռի ավելացումը:

10. ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ (8 ժԱՄ)

Նյարդային համակարգութեան նշանակութունը: Նրա կազմութեան ընդհանուր տեսութունը: Նյարդային համակարգութեան հիմնական հատկութունը՝ զրգոականութուն և հաղորդականութուն:

Հասկացողութունը զրգոման մասին:

Վոլնուղեղ, նրա կազմութունը: Ծայրամասային նյարդ: Հասկացողութունը ռեֆլեքսի մասին:

Գանդուղեղի կազմութունը: Ուղեղի բունը, փոքր ուղեղ, գանդուղեղի նյարդերը: Ուղեղի ընդ Փունկցիան: Յերկայնաձիգ

ուղեղի նշանակութունը ներքին որդանների կանոնավորման գործում: Փոքր ուղեղը և նրա դերը:

Հասկացողութուն վեգետատիվ նյարդային համակարգութեան մասին:

Գանգուղեղի կիսագնդերը: Նրանց կազմութունն ու նշանակութունը: Պավլովի ուսմունքը պայմանական և վոչ պայմանական սեփեքաների մասին:

Զգացողութեան և շարժողութեան ամենարարձր կենտրոնները գանգուղեղային կեղևի մեջ:

Խոսք և նրա կենտրոնները:

Գանգուղեղի կիսագնդերը վերպես մաքի դործարան:

11. ԶԳՍՅԱՐԱՆՆԵՐ (5 ԺԱՄ)

Զգայարանները վերպես արտաքին աշխարհը ճանաչելու գործարաններ:

Աչք. նրա կազմութունը, ցանցաթաղանթի նշանակությունը:

Հոտոցութեան գործարանը և ձայնի ընդունումը:

Զայն և խոսք: Հնչյունների առաջնալը կրկորդում:

Հոտոտելիք և ճաշակելիք:

Մաշկային զգացողութունը. ջերմութեան զգացումը, շոշափելը և ցավի զգացումը: Մկանային զգացողութուն: Մաշկային և մկանային զգացողութեան դերը աշխատանքային պրոցեսում:

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (2 ԺԱՄ)

Աշխատանք և որդանիզմ: Ուժասպառութուն և հոգնածութուն: Տարբեր գործարանների և համակարգութունների մասնակցութունն աշխատանքի պրոցեսում: Գիտակցութեան դերը աշխատանքային գործունեութեան մեջ: Դեպի աշխատանքը գիտակցական վերաբերմունքի նշանակութունը սոցիալիզմի պայմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

1. ՊՐՈՑ. ԲՍԲՍԿԻ.—Մարդու ֆիզիոլոգիան: Դասագիրք մանկ. ԲՈՒՀ-երի համար. 1936 թ.:
2. ԻԵՔԵՐ.— Մարդու ֆիզիոլոգիան:
3. ՊՐՈՑ. ԼԻՍԵՆԿՈՎ.— Մարդու անատոմիան:

ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔ (45 ԺԱՄ)

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն (1 ԺԱՄ)

Եվոլյուցիոն տեսութիւնը կենսաբանութեան մեջ վորպէս զիւլեկտիկ-մատերիալիստական աշխարհայայցքի բնադիտական հիմունք:

Եվոլյուցիոն տեսութեան նշանակութիւնը կենդանարուծութեան և բուսարուծութեան սոցիալիստական վերակառուցման գործում:

ԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵՔՈՐԴՆԵՐԸ (4 ԺԱՄ)

Եվոլյուցիայի ապացույցները հնեարանութեան բնագավառից: Կենդանական և բուսական աշխարհի փոփոխութիւնները յերկրաբանական տարբեր դարաշրջաններում: Բարձր ձևերի ապիլի ուշ յերևան դալը յերկրի վրա՝ ստորին խմբերի համեմատութեամբ: Այսպէս կոչվող «համաքական ձևերը», վորոնք իրենց մեջ պարունակում են ապիլի հին և ապիլի նոր խմբերի հատկանիշները (նախաթռչուններ): Ձևերի բրածո շարքերը (ձիւնախնինները և միասնաբանիները ծագումը):

Ապացույցներ համեմատական անատոմիայի բնագավառից: Հոմոլոգիկ և անալոգիկ որդաններ (վոդնաշարավորների տարբեր դասերի վերջավորութիւնները, թռչունների և միջատների թևերը): Ռուդիմենտար գործարաններ և նրանց նշանակութիւնը (ձիւրի «քարե» վոսկրիկը, թռչունների թևերի վրա յեղած մատների ուղիմենտները և այլն):

Կենդանական աշխարհի տարբեր խմբերը միմիանց հետ կապող անցողիկ ձևերը (ալստրալիական միանցքանիները, թաքավոր ձուկը, բազմալողակը և այլն):

Կառուցվածքի նմանությունը վորպես ավյալ խմբի կենդանիների կամ բույսերի բնդհանուր ծագման հետևանք: Կառուցվածքի բնդհանուր նմանությունը միևնույն դասի կամ միևնույն տիպի սահմաններում (կոնկրետ որինակի վրա):

Բույսերի և կենդանիների բջջային կաղձությունը վորպես վողջ որգանական աշխարհի բաղձաղանություն մեջ յեղած միասնությունն արտահայտությունն:

Եվոլյուցիայի ապացույցներ սաղմնաբանության բնագավառից: Զվի միարջիջ ստաղիան վորպես յեղակեթային մոմենտ յուրաքանչյուր բաղձարջիջ որգանիզմի դարգացման մեջ: Զվի արտուղմը (կոտորակվելը): Սաղմերի դարգացման սկզբնական ստաղիաների նմանությունը վորպես բացատրություն բաղձարջիջ կենդանիների բնդհանուր ծագման:

Տարբեր վողնաշարավոր կենդանիների սաղմերի նմանությունը, կառուցվածքի այն գծերը, վորոնք բարձրակարգ կենդանիների սաղմերին մոտեցնում են ստորակարգ կենդանիներին և ավելի նախնական ձևերին (խորդա, խոփկային զեղձեր): Մյուլեր-Հեկկելի Շիմնական բիոգենետիկ որենքը և նրա արժեքն անհատի դարգացման և տեսակի դարգացման միջև յեղած կապն բմբունելու համար: Անհրաժեշտ վերապահումներ և ուղղումներ բիոգենետիկ որենքի վերաբերյալ (սաղմի հարմարվելը, առանձին ստաղիաների կրճատվելը, շեղումներ առանձին որգանների դարգացման մեջ):

Եվոլյուցիան պրոցեսն ապացուցելու և տարբեր ձևերի ու խմբերի աղգակցությունն աստիճանի հարցը լուծելու համար զործադրվող ուսումնասիրությունն տարբեր մեթոդները:

ԴԱՐՎԻՆԻԶՄ (16 ԺԱՄ)

Դարվինի տեսությունը վորպես կենդանական և բուսական աշխարհի եվոլյուցիայի ժամանակակից ուսմունքի հիմք:

Դարվինի նախորդները: Լամարկը և նրա տեսության հիմնական գրույթները: Եվոլյուցիոն պրոցեսի լամարկային բացատրությունն սնանկությունը, «աստիճանավորման» (գրադացիա) ձգտում ունենալու և անձնական ջանքերի նշանակությունն մասին նրա պատկերացման վիտալիստական և իդեալիստական բնույթը, ձևք բերած հատկանիշների ժառանգման պեննարի-

Կուսիցունն ըստ ժամանակակից կքսպերիմենտալ գիտութեան
տվյալներն:

Գարվիճնիզմի հիմունքները: Խոշոր շուրջատնտեսութեան
պրակտիկայի մեթոդներն ու նվաճումները վերջես Գարվիճնի
թերութեան զլխավոր հենակետերից մեկը:

Փոփոխականութեանն ու ժառանգականութեանը վերջես
տնային կենդանիների և կուլտուրական բույսերի տեսակների
մշակման համար մարդու կողմից կատարած արհեստական ընտ-
րութեան հիմունք: Ընտրութեան տարբեր ուղղութեանները:
Տնային ցեղերի և կուլտուրական տեսակների բազմազանու-
թեանը վերջես ժառանգական փոփոխութեանների արհեստական
ընտրութեան արդյունք:

Բնութեան մեջ կատարվող ընտրութեանը: Բազմազման
պրոգրեսիան և կենդանի ելակների մասսայական կորուստը:
Գոյութեան պահպանման և ամենից ավելի հարմարվածների
կենդանի մնալու համար մղվող պայքարը բնական ընտրութեան
հետևանքով: Գոյութեան կոփված հասկացողութեան ընդարձակ
իմաստը, ներառյալ վոչ միայն կոփվը, այլ և փոխհարաբերու-
թեանների ամբողջ բարդութեանը, վորը կենդանի ելակներին
կապում և իրենց շրջապատող որդանական և անորդանական աշ-
խարհի հետ (կոնկրետ պատկերացումներով՝ անտառի, մարդագետ-
նի, անասպատի կյանքի և այլ որինակներով):

Հատկանիշների տարբերվելը վերջես բնական ընտրու-
թեան տարբեր ուղղութեանների արդյունք: Միջակաձևերի ան-
հետացումը վերջես կենդանական և բուսական աշխարհի առան-
ձին խմբերի տեսակների մեկուսացման և եվոլյուցիայի ուղի-
ների անջատման պատճառ հասկացողութեան որդանական աշ-
խարհի «եվոլյուցիոն ծառի» մասին: Ավելի պրիմիտիվ ձևի որ-
դանիզմների կենդանի մնալու պայմաններն ավելի բարձր կադ-
մակերպված խմբերի կողքին:

Եվոլյուցիան և հարմարվածութեան յերևութեանները: «Նպա-
տական հարմարութեանը» որդանիզմների կազմութեան մեջ վերջես
ամենից ավելի հարմարվածների գոյութեան և յերկար ապրելու
համար մղվող պայքարի արդյունք: Տիպիկ հարմարվածութեան
որինակներ (կենդանիների պաշտպանողական գունափոքումը, մաս-
նագիտացված ձևերի կազմութեանը, ծագիկների և նրանց բեղմ-
նափոքողների փոխադարձ հարմարվածութեանը): Նպատական հար-

Մ
մարտութեան պատմականութիւնն ու հարաբերական ընդթիւր և նրա անցումը իրեն հակադրութեան՝ դրութեան փոփոխուող պայմաններում (որինակներ՝ խայթոցով և նախադրուշացնող դուժարութեամբ պաշտպանուող միջասներ, փորոնցով կերակրու են դողչները և թռչունները (խաչկուռները), «չուտվող» բրդոտ թրթուրները, փորոնք կուլ են դնում իրուններին և հեծյալներով վարակվելուց զոչնչանում : Բրածո զինուորավորի և նախաթռչունների կազմութեան առանձնահատկութիւնները, փորոնք բախարարում ելին միջավայրի պահանջները նախորդ դեռուղիական ժամանակաշրջանում, բայց և հետագայում նրանց մասնեցին կորստի : Հողից զոչ պահանջկոտ բույսեր— «պիտներնէրը», փորոնք հետո դուրս են մղվում շվաքին ալեկի զխմացկոտ բույսերի կողմից և այլն) :

Որդանական «նպատակահարմարութեան» նկատմամբ Դարվիւնի տեսութեան կազմից տրված մատերիալիստական բացատրութիւնը վորպես ուժեղ փաստարկում այդ տեսութեան մեծաթիւզիկը կրոնական մեկնաբանման և լստարկիլզմի զողով վիտալիստական բացատրութիւնների դեմ :

Դարվիւնիզմի նշանակութիւնը և նրա զիպեկաթիկը մատերիալիստական ընդհանուր հիմունքը : զարվիւնիզմի գնահատականը մարքսիզմի հիմնադիրների կազմից (Մարքսի, Ենգելսի, Լենինի) և Դարվիւնի ուսմունքի մասնակի ուղղումները՝ մտցված մարքսիստական քննադատութեան կողմից : Դարվիւնիզմի հանդեպ յեղած վերաբերմունքը բուրժուական յերկրներում, ուղղակի պայքարը նրա դեմ և իմպերիալիստական քաղաքականութեան, դատակարգային տիրապետութեան ու արդային ճնշման «զլիտական» հիմնավորման համար այն ուղտադրծելու փորձերը :

ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՅԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՀԻՄՈՒՆԲՆԵՐԸ (14 ԺԱՍ)

ժառանգականութեան որինաչափութիւնները և նրանց նշանակութիւնը ելիլյուցիայի պրոցեսը հատկանալու համար և դյուդատմտեսութեան պրակաթիլայի համար : Մենդելի աշխատանքը սիսեոի հետ : Մենդելի յերեք հիմնական կանոնները՝ դերակչութեան, ճեղքման և հատկանիշների անկախութեան կանոնները : Մոնոհիբրիդային և դիհիբրիդային խաչասերումը : Հատկանիշների նոր կոմբինացիաներ ստանալը դիհիբրիդային և պոլիհիբրիդային խաչասերման դեպքում :

Ժառանգականութեան քրոմոգրամային տեսութիւնը վորպէս Մենդելեյան որինաչափութեան նյութական հիմնախորում: Ժամանակակից գիտութեան կողմից Մենդելեյի կանոնները մեջ մացրված ուղղումները (վոչ լրիվ դերակշարութեան, կապակցված հասկանիչներ և այլն): Հասկացողութեան դեմքի մասին. դեմքի և հասկանիչի նույնացման վոչ ճիշտ լինելը. որդանիզմի հասկանիչները դարգացումը վարպէս դեմքի և որդանիզմի մյուս մասերի փոխադրեցութեան արդյունք: Գենոտիպ և Ֆենոտիպ. այդ հասկացողութեանները սարբերման անհրաժեշտութեանը և նրանց հակադրման սխալ լինելը (Ֆենոտիպը վորպէս դենոտիպի «հազուսո» հասկանալու դեպքում): Ժառանգական փոփոխութեանները (մուտացիա) վորպէս դեմքի փոփոխման արդյունք. մուտացիայի արհեստական ստաջացումը (Մյուլլերի փորձերը): Ընտրութեանը և ճիւրղիջիլացիան վորպէս բույսերի և կենդանիները նոր ձևեր ստանալու մեթոդներ: Պորհրդային սեղիկցիայի կարևորագոյն նվաճումները բուսաբուծութեան և անասնաբուծութեան բնագափառում (Ի. Վ. Միչուսինի և սեղիկցիոն վաշանների աշխատանքները. կենդանիները ճիւրղիջիլացիայի և ակլիմատիլացիայի ինստիտուտի աշխատանքները):

Այսպէս կոչվող ձևական գենետիկայի մեթոդների պահասութեանը՝ կարված դարգացող որդանիզմի մնացած մասերից գեները անկախութեան մասին և Ֆենոտիպի վոփոխականութեան սահմանների հաստատութեան մասին յեղած պատկերացման հետ: Որդանիզմների բնութեան ձևափոխման խնդիրները՝ բուսական և կենդանական ձևերը դարգացման որինաչափութեան ուսումնարարման հիման վրա. տիպ. Տ. Դ. Լիսենկոյի աշխատանքները:

ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՍԸ (7 ԺԱՍ)

Մարդու ծագումը կենդանական ստորին ձևերից. համեմատական անատոմիայի, համեմատական ֆիլոլոգիայի (արյուն) և սաղմնաբանութեան ալյարները: Մարդու զիբը կենդանական աշխարհի սխառնում. պրիմատների կարգը: Մարդանման կապիկները վորպէս ժամանակակից ձևերի մեջ մարդու ամենամոտիկ ազգակից: Մարդու և ժամանակակից մարդանման կապիկները

մարմնի կարմուխյան նմանութունն ու տարբերությունը. կապիկ
դանգի, վաղնաչարի, կոնքի և վերջավորությունների առանձնա-
հատկութունները մարդու համեմատությամբ: Ժամանակակից
կապիկների մասնադիտացման բնորոշ դժերը, վորոնք զրկում են
մեզ հնարավորությունից նրանց համարել մարդու նախածեղեր:

Մարդու բրածո նախնիները: Պիտեկոնտոպը վորպես մարդու
և կապիկ միջև շարկատող ողակ, — մի ձև, վորի մարմինը արդեն
բնդունել և ուղղաձիգ դիրք և վերին ու ներքին վերջավորություն-
ների միջև կատարված Փունկցիաների բաշխում: Սինանտոպը
վորպես մարդացման հետագա աստիճան. սրբամիտիվ գործիքներ
սրտաբասակու նրա բնդունակությունը: Հարկերերդյան ծնոս:
Նեանդերթալյան «նախամարդը» և նրա լայն տարածումը: Արամանյու-
նի մարդը վորպես ժամանակակից «պիտակից մարդու» հանդիս ձև,
նրա տեխնիկայի ավելի նշանակակից կատարելագործվածությունը:

Աշխատանքի դերը հնադարյան կապիկ մարդացման սրտցե-
սում: Տեղավորության միջոցներէ յեղանակի (ձևի) փոփոխու-
թյունը (ուղիղ քայլվածք) և վերին ու ներքին վերջավորու-
թյունների Փունկցիաների լրիվ բաժանումը վորպես կապիկից
մարդու անցնելու մեծահան քայլ: Մարդու նախահարբի հոտու-
րին կենսակերպը վորպես մարդկային հասարակության, տա-
ջացման անհրաժեշտ նախադրյալ: Գործիքների սրտաբաստումը և
աշխատանքը վորպես մարդկային հասարակության հիմնական
բնորոշ դիմ: Պոսքի ծագումը վորպես միատեղ աշխատանքի
արդյունք և դրա հետ միաժամանակ առաջացած «միմյանց ինչ վոր
բան առելու սրահանջ» (Նեդելյու): Չեոքի, խոսքի սրդանի և ու-
ղեղի միատեղ աշխատանքը վորպես «միշտ ավելի բարդ գործու-
ղություններ կատարելու, իրեն ավելի բարձր նպատակներ զնե-
լու և նրանց հասնելու բնդունակություններ» (Նեդելյու) ձևու-
թեթելու պատճառ:

Գոյության կոիվը կենդանական և բուսական աշխարհում և
գաղափարագային սրաքարը մարդկային հասարակության մեջ:
Որդանական աշխարհի եվոլյուցիայի զարվինաչին կենտարանական
որենքները մարդկային հասարակության մեջ փոխադրելու սխալ
լինելը: Այսպես կոչված «սոցիալական զարվինիզմը» և նրա դա-
սակարդային հիմքը: Մարքսիզմը զարվինիզմի հետ նույնացնելու
անթույլատրելիությունը:

Կյանքի ծաղման հարցը: Ինքնածնության ուսմունքը հնում և նոր ժամանակներում: Պատարի աշխատանքները և նրանց վարելու դիտական ու գործնական նշանակությունը: Պատարի փորձերի արդյունքների ընդարձակ մեկնաբանման անթույլատրելիությունը:

Կյանքը վորսես նյութի նոր վորակ, վորը պատմականորեն առաջացել և յերկրագնդի վրա բնականորեն ընթացող փոփոխությունների պրոցեսում: Պարմաններ, վորոնցում կարող եյին յերկրի վրա առաջանալ բարդ որդանական միացություններ: Ժամանակակից քիմիա կենսաբանական հիպոթեզները կյանքի ծաղման մասին: Կենսական յերեւոյթների սպեցիֆիկության դիալեկտիկ մատերիալիստական ըմբռնումը վորսես հակակշիւ կենսական յերեւոյթները Փիդիկայի և քիմիայի յերեւոյթներին համարեցնելու հնարավորության մասին, մեխանիստական հայացքների և «կենսութի» մասին՝ վիտալիստական պատկերացումներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Ա. ՍՈՒՍՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԵՂՅԱՅԵՎ Մ. Մ.— Եվոլյուցիոն ուսմունքի հիմունքները: Դասագիրք մեջնահարգ դպրոցների համար, Ուչսկոդչիկ, 1937 թ.:

ԳԵՄՍԵ Ռ.— Տեսակների ծագումը և Դարվիլիզմ: Մ. Մ. Մեստերդադել լրաց. 1936 թ.:

ՏԻՄԻՐՅԱԶԵՎ Կ.— Չարլզ Դարվինը և նրա ուսմունքը (մի շարք հրատարակ.):

ՏԻՄԻՐՅԱԶԵՎ Կ. Ա.— Դարվինիզմը և սելեկցիան, Սելխոդչիկ, 1937 թ.:

ԵՆԳԵԼՍ Ֆ.— Աշխատանքը դերը կապի մարդայման պրոցեսում (կառանձին հրատարակութուն):

ՎԻՇՆԵՎՍԿԻ Գ.— Մարզու ծագումը: Հրատ. Վեթեխտ, 1929 թ.

Բ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԵՂՆԻԿՈՎ Մ. Ի. ՅԵՎ ՇԻՐԱՆՈՎ Ա. Ա.— Եվոլյուցիոն ուսմունքի մեթոդիկա, 2-րդ հրատ, Ուչսկոդչիկ 1937 թ.:

ՏԻՄԻՐՅԱԶԵՎ Կ. Ա.— Պատմական մեթոդը կենսաբանության մեջ (ըստի նախկին առանձին հրատարակության, այս աշխատանքը ամբողջությամբ մտել է Չարլզ Դարվինը և նրա ուսմունքը) նոր բունական հրատարակության զբջի մեջ, 1937 թ.):

ՎԻՉՈՒՐԻՆԸ ՅԵՎ ԴԱՐՎԻՆԻՉՄԸ— Ժող. ակադ. Բ. Ա. Կելլերի խմբագրությանը, Սելխոդչիկ, 1937 թ.:

ԲԱՌԻՆԻ Ե.— (Պմբ.) Ընդհանուր կենսաբանութուն, Ուչսկոդչիկ, 1937 թ.:

ԲԼՅԱԽԵՐ Լ. ՅԱ.— (Պմբ.) Ընդհանուր կենսաբանութուն, Բիոմեդիկ, 1936 թ.:

ՄԵՎԵՐՅՈՎ Ա. Ն.— Եվոլյուցիոն պրոցեսի գլխավոր ուղղութիւնները, Բիոմեդիկ, 1934 թ.:

ՆԵՄՏՈՒՐԻՍ Մ. Ֆ.— Մարզը և նրա նախնիները: ԳԱԻՉ, 1934 թ.:

ՄԱՐԲՍ, ԵՆԳԵԼՍ, ԼԵՆԻՆ.— Կենսաբանության մասին (ժողովածու): Կուսհրատ, 1936 թ.:

ՈՊՍԻՆ Ա. Ի.— Կյանքի առաջանալը յերկրի վրա Բիոմեդիկ, 1936 թ.:

ԳԵՈՒՈԳԻԱ ՅԵՎ ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱ

Բացատրական

Դեոլոգիայի և միներալոգիայի ծրագիրը կաղմելու ժամանակ ուշադրութեան են առնված նախ այն տեղեկութեանները, վորոնք սովորողները ձեռք են բերել Փիլիկական աշխարհագրութեան դասընթացից՝ յերկրագնդի ձևի և չափերի, նրա Փիլիկական հատկութեան, ցամաքի դեոսոքոլոգիայի, ովկենագրութեան և ողերևութաբանութեան մասին: Յերկրագնդ՝ դասընթացին հասկացված ժամերի քչութեանն ստիպել և ընտրել շարադրվող գիտութեանների միայն ամենահիմնական մոմենտները:

Դասընթացի խնդիրները հանգում են յերեք հիմնական պահանջներին. 1. առլ սովորողներին ընդհանուր պատկերացում յերկրի կեղևիում կատարվող գեոլոգիական պրոցեսներին, ինչպես նաև նրա պատմութեան հիմնական մոմենտների մասին. 2. հաղորդել նրանց ամենաստարածված միներալների և ապառների մասին գործնական գիտելիքների մի վորոշ (բացարձակապես անհրաժեշտ) դումար. 3. առլ նրանց նույնպես ամենաանհրաժեշտ (գործնական և տեսական) գիտելիքներ ոգտակար հանածոների հիմնական տիպերի մասին՝ կապված գեոլոգիական պրոցեսների ընդհանուր ընթացքի հետ, նրանց ծագման ժամանակի և ՄՍՀՄ տերիտորիայում նրանց տարածման մասին:

Ներկա ծրագիրը գործնականորեն իրագործելու ժամանակ անհրաժեշտ և նկատի ունենալ, վոր նրանում հաղորդվող նյութը կարող և բավ մշակվել և յուրաքվել միայն այն պայմանով, յեթև յուրաքանչյուր որչեկտ (միներալ կամ ապատ) կուսումնասիրվի վոշ միայն «ըբքով» կամ դասատվի ասածներով, այլ ամենից առաջ կմշակվի բնական նմուշների վրա: Այսպիսով դասընթացի 3/4-ն ըստ եյութեան գործնական աշխատանքներ են լաբորատորիայում, հետեվաբար, նախատեսում են նրա առկայութեանը:

Սակայն միայն լորորատորական աշխատանքը դեռևս բա-

վական, չէ: Ըստ ծրագրի աշխատելու ժամանակ լավագույն արդյունքներ կստացվեն այն դեպքում, յերբ սովորողը կկարողանա ճանաչել որչեպաներն ու դիտել պրոցեսները զոչ միայն լարորատորիայում, այլ և անմիջականորեն բնության մեջ: Այստեղից բղխում և ամառային դաշտային եքսկուրսիաների անհրաժեշտությունը դեպրոլոյի և միներալոգիայի գծով զոչ պակաս քան 2—3 որ տեվորությամբ: Այդ եքսկուրսիաները ծրագրի մեջ չեն մտցված (քանի վոր դասընթացի տեսական մասի համար ժամանակ չեր մնա), բայց և այնպես դրանք պետք և կադմեն անցնելիք առարկայի որդանական և բացարձակապես անհրաժեշտ մասը:

Գեոլոգիան, ինչպես նաև ընդհանրապես բնագիտությունը, չափադանց սերտ կադ ունի դավառագիտության հետ և վորոշ չափով կարող և տարլել դավառագիտական նյութերի վրա: Ծրագրում այդ չի արտացոլված, վորովհետև նա պետք և տա պարտագիր մի վորոշ միներում, վոր պարտագիր և ըստ ամենայնի: Բայց և այնպես բարորովին սխալ կլիներ, չեթե ներկա դասընթացի ուսուցիչը նրա մեջ չարտացոլեր տեղական յերկրային առանձնահատկությունները: Գավառագիտական տարրերը հնարավոր և դետեղել դասընթացի տեսական մասն անցնելու ընթացքում: Բայց նա առանձնապես մեծ նշանակություն և ստանում դաշտային եքսկուրսիաների ժամանակ: Այսպիսով, եքսկուրսիաները կարևոր են յերկու տարբեր մտտիվներով՝ նախ, վոր նրանք կոդենն, ինչպես պետքն և, տիրապետելու այն տեսական նյութին, վոր առաջ սովորել են, և յերկրորդ, վոր նրանք ներկայացնում են այն բնական հունը, վորով պետք և բերվեն և ուղտագործվեն տեղական դավառագիտական նյութերը, վորոնք լրացնում և աշխուժացնում են դասընթացի ընդհանուր տեսական մասը:

ՄՐԱԳԻՐ (40 ԺԱՄ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասկացողություն միներալոգիայի և գեոլոգիայի մասին, վորպես յերկրի կեղևին ուսումնասիրող գիտությունների: Այդ գիտությունների տեսական և գործնական նշանակությունը: Գեոլոգիայի դերը մեր յերկրում սոցիալիստական շինարարու-

թյան ներկա ետապում՝ վորպիս զիտության մի ընադալստի,
վորն ուսումնասիրում և շինարարության հանքային ռեսուրսները:

I. ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Միներալ և ապառ: Միներալի բնութագրումը մորֆոլո-
գիական և քիմիական տեսակետից: Հասկացողութուն բյուրե-
ղային ձևվի մասին: Բյուրեղների սիմետրիան: Սիմետրիայի ելե-
մենտները՝ սիմետրիայի հարթութունը, առանցքը, կենտրոնը:
Բյուրեղային դասերը և սիստեմները: Վորոշել սիմետրիայի ելե-
մենտները նախնական ձևերի վրա՝ խորանարդ, ոկտանդր, տե-
րանդր, հեկսագոնային պրիզմա:

Միներալների ֆիզիկական հատկութունները՝ կարծրու-
թյունը (կարծրության շկալան), տեսակարար կշիռը, վալյը, դույնը:

Միներալների քիմիական հատկութունները՝ իզոմորֆիզմ
և պոլիմորֆիզմ: Հասկացողութուն միներալների քիմիական ա-
նալիզի մեթոդների մասին:

Միներալների գենեզիսը: Յերկրի կեղևի քիմիական կադ-
մութունը: Լեթոսֆերայում տարածված գլխավոր կլեմենտները
(առաջին մեկուկես տասնյակը): Թթվածնի, սիլիցիումի, ալյու-
մինիումի և նրանց միացութունների ղերը յերկրի կեղևի կադ-
մության մեջ:

Հասկացողութուն միներալների կլասիֆիկացիայի հիմունք-
ների և գլխավոր խմբերի մասին՝ կլեմենտներ, սքսիդներ, հիդ-
րատներ, աղեր, սուլֆիտներ:

Ամենազլխավոր միներալների հակիրճ նկարագրութունը և
պրակտիկ ռեսուրսասիրութունը (քիմիական բաղադրութունը,
ձևվը, ֆիզիկական հատկութունները, առաջացումը, կիրառումը
տեխնիկայում):

Կվարց: Հիդրատներ SiO_2 :

Դաշտային շպատ: Դաշտային շպատի հոդմահարումը: Կառ-
լին: Փայլար:

Ընդհանուր հասկացողութուն մետասիլիկատների և որ-
թոսիլիկատների մասին: Յեղջերային պատրանք:

Կալցիա: Դոլոմիտ:

Ապատիտ: Ֆոսֆորիտ:

Գիպս, քարաղ, կալիումական աղ:

Պիրիտ: Խալկոպիրիտ: Գալենիտ: Պելիմետազական հանածոներ:
Մուգ շագանակադուլն յերկաթաքար: Կարմիր յերկաթա-
քար: Մագնիսական յերկաթաքար: Պիրոլուզիտ:

II. ԳԵՈՂՈԳԻԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՇԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՊԱՌՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. ՀՐԱՐԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԱՔՄԱՏԻԿ ԱՊԱՌՆԵՐ

Ժամանակակից հրաբուխների ժայթքման պրոցեսների ընդ-
հանուր բնութագիրը: Ժայթքումների պրոզոլիտները՝ մոխիր,
լավա, դազեր: Հրաբխի հանդման ստազիաները՝ սոլֆատորներ, մո-
ֆետներ: Հասկացողություն մագմայի ինտրուզիայի (լորքի
ապառներ) և եֆֆուզիայի (մակերեսի ապառներ) մասին:

Մագմատիկ ապառների ընդհանուր բնութագիրը: Մագմա-
տիկ ապառների ստրուկտուրան՝ ապակենման, լրիվ բյուրեղային,
պրոֆիրային, պղպջակավոր: Նրանց առաջացման պայմանները:

Մագմատիկ ապառների քիմիական կազմությունը: Ապառ-
ների դասակարգումն ըստ խմբերի՝ թթվային, չեղոք, հիմքային,
և նրանց գլխավոր ներկայացուցիչները (գրանիտ և լիպարիտ,
դաբբը և բազալտ): Մագմատիկ ապառները վարդելու մե-
թոդը:

Հրաբխային տուֆեր և նրանց առաջացումը հրաբխային մոխ-
րից, և նրանց տեսակները: Արթիկ տուֆո—լավան և նրա շինա-
րարական հատկությունները:

Հրաբխային ապառների հետ կապված ոգտակար հանածո-
ներ (հանքեր): Նրանց բաժանումն ըստ թթվային և հիմքային
ապառների: Մագմային անջատումներ՝ պլատին, ապատիտ (Խի-
րինյան հանքեր), խրոմիտ, մագնիսական յերկաթաքար (Ուրալ,
Անդրկովկաս, Տաշքենդ): Հասկացողություն պեղմատիտների,
նրանց առաջանալու և նրանց հետ կապված ոգտակար հանա-
ծոների մասին (փայլալ, հալվալյուտ ելեմենտներ, թանդարժեք
քարեր): Վրաստանի Ջիրուլի մաստավիչը: Հասկացողություն հիդ-
րոթերմային պրոցեսների և նրանց հետ կապված ոգտակար հա-
նածոների մասին (Au, Ag, H.Cu, ZnAs.Sn՝ V, Mo և այլն):
Ալավերդի, Ղախան, Փիրզուղան, Ազարակ):

2. ՄԱԳՄԱՏԻԿ ԱՊԱՌՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ. ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՍՐԱՆՑ ՏԻՊԵՐԸ

Ֆիզիկական և քիմիական հողմնահարում: Հողմնահարման Փակ-տորնները: Գրանիտի, դաշտային շպատի, փայլարի հողմնահարու-մը, պիրիտի ոքսիդացումը: Որդանական հողմնահարում:

Քայքայման պրոպուլսիվների տեղափոխութիւնը և նրա վլիտ-վոր սպինները: Տեղափոխման գերդրական գործոնների քայ-քայիչ և շինարար գործունեութիւնը:

Նստվածքային ապտոնների առաջացումը. նստվածքների կու-տակման ուսյոնները՝ ծով, լիճ (գետաբերաններ) և գետերի հո-վիտները: Նստվածքային ապտոնների տիպերը: Ելյուվիալ նըստ-վածքներ (քոքսիտներ, լատերիտներ): Բեկորային ապտոններ՝ խիճ, ճարագար, ավազ, մանրախիճ, կոնգլոմերատներ, ավազա-քարեր, կավեր, մերդեղներ, լյոսս: Որդանողն ապտոններ՝ կրա-քարեր (Փորամիկիֆերային և խեցային), կավիճ, դոլոմիտներ, տրեպիլ, սորֆ, սաղրոպիլ, քարածուխ, նավթ, ալյուրոլ թեր-թաշարեր, Փոսֆորիտներ: Քիմիական ծագումի նստվածքներ՝ պոլս, անհիդրիլ, քսոսոլ, կալիական աղեր:

Նստվածքային ապտոնների կիրառումը տեխնիկայում և գյուղա-տնտեսութեան մեջ (շինանյութեր, պտեղիք, պարարտանյութ, քիմիական հումուլթ):

3. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԵՏԱՍՈՐՖԻԶՄԻ ՊՐՈՑԵՍՆԵՐԸ

Յամաքի բարձրացման և իջման ապացույցները ներկայումս (ծովախնյա տերրանները, գետերի հունի ընդծովյա շարունակու-թիւնը և ալյն) և անցյալում (ծովային և ցամաքային նստվածք-ների ընդհատումը կարվածքներում): Յերկրի կեղևի շարժում-ների եպիբոլեմիկ և սրոպեմիկ տիպերը: Որդեկեղիսի ժամանակ առաջացած սարոպտուրանների ձևերը՝ ծալքեր, պրաշարժեր, իջվածքներ, ֆեկսուրաններ: Սեյսմիկական յերկուլթներ:

Ապտոնների մետամորֆիզմը և նրա Փակտորները՝ ճնշում, ջերմութիւն (տեմպերատուրա), լուծույթների շրջանառութիւնը:

Մետամորֆիզմի հետևանքները՝ բյուրեղային թերթաքա-րերի, կվարցիտի, մարմարի, գնեյսի առաջացումը: Հասկացո-ղութիւն սրթողնեյանների և սպարաղնեյանների մասին:

III. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Յերկրի ծագումը: Կանոնի և Լապլանի, Ջինսի և Ջաֆրեյսի կոսմոգոնիկ տեսությունները: Յերկրի կեղևի և հիդրոսֆերայի ձևակերպումը: Կյանքի յերեխայը: Հասկացողության յերկրի և նրա թաղանթների կազմության մասին:

Յերկրի պատմության գեոլոգիական շրջանի հիմնական ստորաբաժանումները՝ արխեյան, պրեկոզյան, մեզոզյան և կայնոզյան երաներ:

Սկզբունքներ, վորոնց հիման վրա սահմանված են այս ստորաբաժանումները: Հասկացողություն ստրատիգրաֆիական և պալեոնտոլոգիական մեթոդների մասին:

ՍՐԽԵՑՄԱՆ ԵՐԱ: Այս ժամանակիս տղաները (բյուրեղային թերթաքարեր) և նրանց սուաջացման պայմանները: Կյանքի եվոլյուցիան արխեյի ընթացքում: Լեռնաշղթաների պրոցեսներն արխեյան երայում և նրանց արդյունքները: յերկրի կեղևի յերկատումը հատուաաաա (պլատֆորմաներ) և պլատտիկ մասերի (որոգեններ և գետնիկիներ): Ռուսական և սիբիրական պլատֆորմաները: նրանց գրանվորումը քարտեղի վրա: Հասկացողություն մնացած պլատֆորմաների մասին:

ՊԱԼԵՈԶՈՅԱՆ ԵՐԱ: Երայի ստորաբաժանումը պերիոդների կեմբրի, սիլուրի, դեվոնի, քարածխի, պերմի: Բուսական և կենդանական կյանքի եվոլյուցիան պալեոզյան երայի ընթացքում: Յերկրի կեղևի շարժումների ընդհանուր ընթացքը (տրանսպրեսիաների և ռեդրեսիաների գորգացումը): Կարեղոնյան և վարիսույան ծաղքալորումներ և նրանց հանդես գալը տարածության մեջ և ժամանակի ընթացքում: Պալեոզյան լեռնաշղթաների որինակներ Միուլթյան սեբրիտրիայում՝ Ուրալ, Տիմանյան թումբ, Միջին Ասիայի լեռները, Ալտայը և այլն: Դոնրասի, Կուզբասի, Կարադանդայի և Միուլթյան հանքալայրերի հիմնական մասայի՝ Ուրալի, Կարակաումնի և այլոց առաջացումը:

ՄԵԶՈԶՈՅԱՆ ԵՐԱ: Երայի ստորաբաժանումները տրիաս, յուրա և կամճային պերիոդները: Բուսական և կենդանական աշխարհի եվոլյուցիան մեզոզյան երայում: Յերկրի կեղևի շարժումը (տրիասի ռեդրեսիան, յուրայի և կամճային տրանսպրեսիաները):

Տրիաս, յուրա և կալճախին սերիտողների նստվածքների տըն-
տեսական նշանակութունը ԽՍՀՄ-ում (քարաղ, դիպս, ջարս,
ծուխ, ալյուրոլ թերթաքարեր, լիտոլոգիկական թերթաքարեր,
հրատուրեն կալիեր, նալթ(Նմբա), Փոսֆորիտներ, կալիւն և այլն) :

ԿԱՅՆՈՉՈՑԱՆ ԵՐԱ.: Հասկացողութուն ալպյան

ծալքավորման մասին. նրա հանդես գալը ժա-
մանակի և տարածության մեջ: Ալպյան լեռնաշղթա-
ների առաջացումը: Նրանց որինակները ԽՍՀՄ-ի տերիտորիա-
յում (Ղրիմ, Կովկաս, Կոպետ-դաղ, Պամիր, Մոնղոլա-Ուստոյան
գոտի): Կայնոզոյան երայի ստորաբաժանումը յերրորդական և
չորրորդական սերիտողների: Բուսական և կենդանական կյանքի
եվոլյուցիան կայնոզոյում: Յերկրի կեղևի գարգացման վերջին
մոմենտները. սառցադաշտային ժամանակաշրջան: Մարդու հան-
դես գալը: Հասկացողութուն բրածո ոստանների մասին: Կայնո-
զոյան երայի նստվածքների ողտակար հանածոները. Կովկասի և
Ուկրաինայի յերկաթի և մանդանի հանածոները, նալթ (Բադու,
Հյուսիսային Կովկաս, Կերչ, Թուման, Ֆերդանա, Թուրքմե-
նստան, Սախային, Կամչատկա և այլն):

Յերկրի գեոլոգիական պատմության բացարձակ տեկողու-
թյունը և նրա առանձին ետապները (երաները): Հասկացողու-
թյուն այս տեղության չարումների մեթոդների (գլխավորա-
պես ռադիոսակտիվ մեթոդի) մասին:

Հիպոթեզներ և տեսություններ պատմա- գեոլոգիական պրո-
ցեսի հիմնական պատճանների մասին:

Լեռնակազմության առաջին հիպոթեզները՝ վուլկանիզմ և
նեպրտունիզմ՝ Չ. Լաշելի աշխատությունները. կոնտրակտացիոն
տեսությունը: Վեգեների տեսությունը: Ջոլիի տեսությունը:
Տեսությունների հակիթճ շարադրումը հիմնական պակասու-
թյունների ցուցադրումով՝ գլխակտիվ մատերիալիստական տե-
սակեախց: Հակակրոնական յեղբակացություններ յերկրի պատ-
մության գիտության մասին:



Արբազբիշնէր՝ Ա. ՅԵՐԻՅՅԱՆ
Ա. ԲԱԼԱԲԱՆՅԱՆ



11.132

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004468

494

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

II
A 23092

214.

1940